



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«12» 03 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 12

Ձեռնարկողը՝

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնա» ՍՊԸ

Ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝

**«Հայաստան էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի
<<Կոտայք>> 110/6Կվ ենթակայանի յուղահեռացման
համակարգի վերակառուցման շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
քաղաք Երևան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի Ժ/պ՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 12

<<22>> 03 2019թ.

**<<Հայաստան էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի <<Կոտայք>>110/6Կվ
ենթակայանի յուղահեռացման համակարգի վերակառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>>ՍՊԸ
Նախագծող՝	<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>>ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Թբիլիսյան խճուղի

<<Կոտայք>>110/6 Կվ ենթակայանի յուղահեռացման համակարգի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ <<Կոտայք>>110/6 Կվ ենթակայանի տարածքում: Ենթակայանի հողատարածքի ընդհանուր մակերեսն ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 999701 վկայականի 2002,2 մ² է, իսկ հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրի է, օգտագործման նպատակը՝ ենթակայանի կառուցման և սպասարկման:

Գործունեության նպատակն է՝ ենթակայանում հնարավոր վթարների, հրդեհների առաջացման դեպքում ապահովել տրանսֆորմատորներում առկա յուղերի կազմակերպված հոսքը և կուտակումը յուղահավաքում: Վթարների և հրդեհների կանխարգման նպատակով անհրաժեշտություն է առաջացել վերակառուցել ենթակայանի յուղահառացման համակարգը, որն իր մեջ ներառում է յուղընդունիչ, յուղահեռացուցիչ և յուղահավաք:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է <<Կոտայք>> 110/6 Կվ ենթակայանում վերակառուցել գրեթե չգործող S1 և S2 տրանսֆորմատորների յուղահեռացման համակարգը: Նախնական հայտով նախատեսվում է յուղընդունիչի, յուղահեռացուցիչի (փակ կոյուղագիծ) վերակառուցում և յուղահավաքի կառուցում: Յուղահավաքը լինելու է 3.25x6.25x3,45մ առանցքային չափերի ստորգետնյա, միաձույլ երկաթբետոնե կառույց: Այն նախատեսված է ամենաշատ ծավալի յուղ պարունակող մեկ տրանսֆորմատորից արտահոսող



առավելագույն յուղի (100%) ծավալի և հրդեհամարման համար անհրաժեշտ ջրի ծավալի(20%) հավաքման չափով: Յուղը նդունիչի, յուղահեռացուցիչի վերակառուցելուց և յուղահավաքը կառուցելուց հետո յուղահավաքը փորձարկվելու է ոռոգման ջրով: Վերակառուցման արդյունքում վթարված տրանսֆորմատորներից արտահոսող յուղը թափվելու է յուղը նդունիչ, փակ ստորգետնյա պողպատե խողովակով (յուղահեռացուցիչ) ինքնահոս տեղափոխվելու է դեպի յուղահավաք: Յուղահեռացուցիչ խողովակների հատվածներում տեղադրվելու են միաձույլ երկաթբետոնե դիտահորեր: Յուղահավաքում կուտակված տրանսֆորմատորային յուղը <<ՀԵՑ>> ՓԲԸ-ի մասնագիտացված կապալառու՝ <<Էներգանորոգում>> ԲԲԸ-ի կողմից ավտոմատորնով տեղափոխվելու է յուղագոյից կայան՝ վերամշակման:

Նախնական գնահատման հայտով ենթակայանի յուղահեռացման համակարգի վերակառուցումը կատարվելու է 40 օրում, 4 հաջորդական փուլերով՝ քանդում, վերանորոգում, յուղահեռացման համակարգի վերակառուցում, յուղահավաքի կառուցում:

Աշխատանքների կատարման ընթացքում նախատեսվում է օգտագործել տեխնիկական միջոցներ՝ ավտոամբարձիչ, բեռնատար մեքենա, էքսկավատոր, բետոնախխանիչ: Քանդման և վերանորոգման փուլերում առաջանալու են կենցաղային և շինարարական՝ վտանգավորության 4-րդ և 5-րդ դասերին համապատասխան թափոններ.

- յուղը նդունիչի հավաքովի բետոնե եզրաքարերի և հիմքի քանդվածք շինարարական աղբի տեսքով, որը տեղափոխվելու է Աջափնյակի շինարարական թափոնների աղբավայր,

- ասֆալթետոնե խառնուրդի մնացորդներ, որը հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,

- սև մետաղի ջարդոն, որն իրացվելու է համապատասխան մասնագիտական ընկերությունների կողմից,

- գրունտ, հողային հանվածքի տեսքով, որն օգտագործվելու է այլ ենթակայանում որպես հետլցիցք,


- յուղոտված հնոտի՝ 1/10 հարաբերությամբ խառնվելու է առաջացած կենցաղային աղբին և տեղափոխվելու է քաղաքային աղբավայր,

- պոլիքլորացված բիֆենիլներ պարունակելու դեպքում յուղոտված հնոտին տեղափոխվելու է <<ՀԵՑ>> ՓԲԸ-ի պահեստարան՝ հետագա ոչնչացման նպատակով,

- չտեսակավորված կենցաղային աղբ, որը տեղափոխվելու է աղբավայր:

Յուղահեռացման համակարգի շահագործման փուլում, հնարավոր վթարների դեպքում առաջանալու է յուղահավաքում կուտակվող տրանսֆորմատային յուղ՝ հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող (3-րդ դաս) և պոլիքլորացված բիֆենիլներ պարունակող (1-ին դաս) թափոններ: Մինչև տեղափոխելը կատարվելու է տրանսֆորմատորային յուղի նմուշի քիմիական անալիզ: Կախված անալիզի արդյունքից՝ հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող յուղը պոմպահանվելու է և մասնագիտացված կապալառուի կողմից տեղափոխվելու է գտման և վերարտադրման նպատակով: Պոլիքլորացված բիֆենիլների թույլատրելի (50ppm²) մեծությունից ավել պարունակելու դեպքում թափոնները չեն վերամշակվելու, այլ ուղարկվելու են <<ՀԵՑ>> ՓԲԸ-ի պահեստարան՝ հետագա ոչնչացման նպատակով:

Նախատեսվող գործունեության իրականացման համար անհրաժեշտ է կատարել 253.3 մ³ ծավալով փորման աշխատանքներ, որից 58,5 մ³ հողն օգտագործվելու է հետլցման համար, 194,8 մ³-ը պահվելու է ենթակայանի հարևանությամբ ծածկված վիճակում, որը հետո տեղափոխվելու է այլ ենթակայանի տարածք, որպես լիցք օգտագործվելու նպատակով: Հետլցման համար նախատեսված հողային ծավալի 2 մ³-ը բուսահող է, որը ենթակայանի տարածքում համապատասխան պայմաններում պահպանվելուց հետո օգտագործվելու է որպես հետլցիցք՝ յուղը նդունիչների հարակից տարածքների հարթեցման համար: Հետլցիցքի համար



օգտագործվելու է նաև յուղընդունիչի վերականգնման աշխատանքներից առաջացած 23,0 մ³ ծավալով խիճը:

Շինարարական և վերանորոգման աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, բնաոռնություններից ջուր՝ տարածքների ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների և յուղահեռացման համակարգի փորձարկման համար: Ջրցանի (8մ³) և յուղահեռացման համակարգի փորձարկման համար (20մ³) ջուրը վերցվելու է ենթակայանի կանաչ գոտիների ոռոգման ջրահամակարգից:

Նախատեսվող գործունեության իրականացման վերջին փուլում կատարվելու է տարածքի հարթեցում և բարեկարգում: Հատուկ կանաչապատման աշխատանքներ չեն իրականացվելու, քանի որ շոգ եղանակներին բուսածածկույթը կարող է հրդեհների տարածման պատճառ դառնալ:

Նախատեսվող գործունեությունը կատարվելու է ենթակայանի արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո, ինչը չի առաջացնի շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների, թափոնների տեղափոխման, հակայուղային ներկերի, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ, որոնք շրջակա միջավայրի վրա կունենան նվազագույն և կարճատև ազդեցություններ՝ թույլատրելի նորմերի սահմաններում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է օդային ավազանի, հողային ռեսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր.

- տարածքում աղբի, շինարարական նյութերի և թափոնների բաց այրման արգելում,
- փոշու արտանետման նվազեցման նպատակով՝ հողի և այլ շինանյութերի տեղափոխում ծածկված թափքով մեքենաներով,
- հողաբուսաշերտի պահպանում ՀՀ կառավարության 08.09.2011թ. թիվ 1396-Ն որոշման պահանջներին համապատասխան,
- յուղընդունիչների խճի պահում ՊՎՔ պարկերում, ծածկի տակ,
- տարածքում ժամանակավորապես կուտակվող թափոնների հավաքում ասֆալտբետոնե հարթակի վրա, ծածկված վիճակում,
- յուղի արտահոսքը կանխելու համար՝ շինարարական տեխնիկայի սպասարկում մասնագիտացված կետերում,
- հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար յուղի և տեղումային ջրերի պոմպահանման աշխատանքների ժամանակ հատուկ պաշտպանիչ տակդիրների կիրառում և այլն:

Փորձաքննական եզրահանգումներ. Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է բնապահպանության նախարարության՝ թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալությունը և վտանգավոր թափոնների քաղաքականության բաժինը: Փորձաքննական գործընթացում հայտը առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Նախատեսվող գործունեությունը շրջակա միջավայրի վրա կունենա նվազագույն և կարճատև ազդեցություն, կնպաստի ենթակայանում հնարավոր բռնկումների, հրդեհների կանխարգելմանը:



Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է << օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (թափոնների, շինադրի, կենցաղային ադրի տեղափոխման, տեղադրման, ջրօգտագործման, ջրահեռացման և այլն):

2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցից միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

3. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել օրվա սահմանված ժամին՝ բնակելի տարածքներում աղմուկի և առավելագույն բեռնվածությամբ աշխատանքային ժամերի ավելացումից խուսափելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ <<Կոտայք>> 110/6 Կվ ենթակայանի տարածքում նախատեսվող յուղահեռացման համակարգի վերակառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դոնոյան

Գլխավոր մասնագետ

Թ. Նուրիջանյան

